



Գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների մատակարարման գնային հարցմանը մասնակցելու հրավեր

01/11/2022 թ.

«ՌԳՎ-Արմենիա» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») կազմակերպում է գնային հարցում (այսուհետ՝ «Հարցում») գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների մատակարարում իրականացնող անձի (այսուհետ՝ «Մատակարար») ընտրության նպատակով:

Հարցմանը մասնակցելու իրավունք ունեն ՀՀ տարածքում պետական գրանցում ունեցող բոլոր անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք:

Հայտերը պետք է ներկայացվեն երկու եղանակով՝ սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով և tender@rgs.am էլեկտրոնային հասցեին, մինչև 2022թ. նոյեմբերի 21-ը ժամը 15:00: Ուշացված հայտերը չեն դիտարկվելու:

Հայտերը կամփոփվեն 2022թ. դեկտեմբերի 5-ին «ՌԳՎ-Արմենիա» ԱՓԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսային պողոտա 1 հասցեում:

Գնային հարցման նկարագիրը և գների ներկայացման պայմանները

Հարցման շրջանակներում քննարկվում է Ընկերության մասնաճյուղերին գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների մատակարարման ծառայությունը՝ որն իր մեջ ներառում է հետևյալ պահանջները.

- ✓ «ՌԳՎ-Արմենիա» ԱՓԲԸ թվով 6 գրասենյակներ ք. Երևանում և թվով 14 գրասենյակ մարզերում գրենական պիտույքների և տնտեսական ապրանքների մատակարարում ըստ Ընկերության կողմից ներկայացված համապատասխան հայտերի: Որոշ դեպքերում մատակարարումը կարող է լինել նաև ըստ պահանջի:
- ✓ Մատակարարի պահեստում Ընկերության կողմից պահանջվող ապրանքատեսակների առնվազն մեկ ամսվա համար նախատեսված քանակների մշտական պահեստավորում՝ ապահովելով համապատասխան տեսակի և քանակի անխափան մատակարարում:
- ✓ Ապրանքատեսակների մատակարարումը պետք է իրականացվի պահանջագրերը ներկայացնելու օրվանից՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- ✓ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում մատակարարված ապրանքատեսակների փոխարինում՝ խոտանի և անհամապատասխանության հայտնաբերման դեպքում:



Հարցման մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը պետք է պարունակի հետևյալ տվյալները՝

- ✓ Միավորի առաջարկվող գինը, որը պետք է ներառի մինչև Ընկերության գրասենյակներ հասցնելու բոլոր ծախսերը,
- ✓ ապրանքատեսակների արտադրող ֆիրման և արտադրման երկիրը.

Գները պետք է ներկայացվեն ՀՀ դրամով՝ ներառելով հարկերը, տուրքերը և մատակարարման հետ կապված բոլոր տեսակի այլ ծախսերը:

Պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները

Հարցմանը մասնակցող անձանցից պահանջվում է Ընկերություն ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

- ✓ մասնակցի անվանումը, իրավաբանական և գործունեության հասցեները, հեռախոսահամարները,
- ✓ պետական գրանցման վկայականի պատճենը,
- ✓ հարցմանը առնչվող այլ տեղեկություններ:

Բոլոր նյութերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Հաղթողի վերաբերյալ վերջնական որոշում կկայացվի, հաշվի առնելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը, առաջարկված ապրանքատեսակների որակական և տեսակային համապատասխանությունը Ընկերության պահանջներին, ինչպես նաև այլ գործոններ (այլ ընկերությունների համար կատարված նմանատիպ աշխատանքների փորձը, առաջարկ ներկայացրած կազմակերպությունների վարկանիշը, Ընկերության հետ ունեցած փոխհարաբերությունները և այլն):

«ՌԳՍ-Արմենիա» ԱՓԲԸ-ն իրավունք է վերապահում ներկայացված առաջարկներից և ոչ մեկը չընդունել:

Մասնակիցն իր հերթին պետք է տրամադրի կոնտակտային անձի վերաբերյալ տեղեկատվություն, որը լիազորված է պատասխանելու առաջարկի դիտարկման ընթացքում ծագած հարցերին:

Լրացուցիչ և մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել «ՌԳՍ-Արմենիա» ԱՓԲԸ, Տնտեսական բաժին՝ ք.Երևան, Հյուսիսային պողոտա 1 հասցեով կամ զանգահարել (374 60) 62 20 20 հեռախոսահամարով: